

ԹԵՄԱ 5.

ՀԱՆՐԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բովանդակություն

Ներածություն	2
Համայնքային ծառայությունների դասակարգումը, իրականացնողները և ֆինանսավորումը	2
Համայնքային ծառայության վճար և որակ	5
ՏԻՄ-երի կողմից մատուցվող հանրային ծառայությունների առանձնահատկությունները.....	8
Գրականություն	12
Հավելված 1.....	13

Ներածություն

Հանրային բնույթի ծառայություններն այն միջոցառումներն են, որոնք երկրի կառավարությունն իրականացնում է ուղղակիորեն կամ իր կողմից ֆինանսավորվող կազմակերպությունների միջոցով՝ իր իրավասության տակ գտնվող հարցերում հանրության պահանջմունքները բավարարելու նպատակով:¹

Հանրային բնույթի ծառայությունների այն տեսակները, որոնց մատուցման կազմակերպումը օրենքով վերապահված է ՏԻՄ-երին, անվանում են համայնքային ծառայություններ: Ուստի, համայնքային ծառայությունների պատշաճ մատուցման կազմակերպումը հանդիսանում է ՏԻՄ-երի հիմնական խնդիրներից մեկը:

Քանի որ պետությունում հանրային կառավարումը հաճախ բազմաստիճան է, հարց է ծագում, թե հանրային կառավարման ո՞ր մակարդակում պետք է մատուցվեն հանրային բնույթի ծառայությունների առանձին տեսակները: Մասնավորապես, որո՞նք են համայնքներին բնորոշ հանրային ծառայությունների տեսակները: Այս հարցին միանշանակ պատասխան չկա, սակայն կարող ենք փաստել, որ յուրաքանչյուր հանրային ծառայություն պետք է կազմակերպվի և մատուցվի իշխանության այն մարմնի կողմից, որն իրավասու է վերահսկելու հնարավորինս փոքր աշխարհագրական տարածք, որի շրջանակներում էլ ներփակված են այդ ծառայության մատուցման օգուտներն ու արժեքը:²

Համայնքային ծառայությունների դասակարգումը, իրականացնողները և ֆինանսավորումը

Յուրաքանչյուր տարի բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների առաջնահերթությունների որոշումը յուրաքանչյուր համայնքի ՏԻՄ-եր կարող են յուրովի կայացնել՝ ելնելով համայնքի բնակչության կարիքներից և պահանջմունքներից, համայնքի սոցիալ-տնտեսական պայմաններից, համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների առկայությունից և վիճակից, ինչպես նաև համայնքի այլ առանձնահատկություններից:³

ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը առաջնահերթ պետք է մատուցվեն օրենքով նրանց վերապահված այն ծառայությունները, որոնց համար առկա են

¹ Հանրային բնույթի ծառայությունները կարող են կապված լինել մարդու հիմնարար իրավունքների հետ (օրինակ, ջրի իրավունքը):

² «Համայնքի ֆինանսական կառավարում» ուսումնամեթոդական ձեռնարկ, Վ. Շահբազյանի խմբ., Գորիսի երիտասարդական միություն ՀԿ, Երևան, 2009թ.

³ «Համայնքի ծախսային քաղաքականության մեթոդաբանություն», Երևան, 2013թ.
<http://www.mtad.am/files/docs/498.pdf>

համայնքի սեփականություն համարվող համապատասխան ենթակառուցվածքներ: Դրանց պահպանումը, շահագործումն ու կենսունակության ապահովումը պահանջում է ամենամյա համապատասխան ֆինանսական միջոցների հատկացում:

Համայնքային ծառայությունների ֆինանսավորումը կարող է իրականացվել՝

- ✓ համայնքի բյուջե մուտքագրվող ընդհանուր եկամուտների հաշվին, և (կամ)
- ✓ տվյալ ծառայության դիմաց սպառողներից գանձվող վճարների հաշվին:

Ընդ որում, եթե այդ ծառայություններն իրականացնում են համայնքային հիմնարկները, ապա գանձված վճարներն ուղղվում են համայնքի բյուջե:

Առևտրային կազմակերպություններն այդ ծառայությունների մատուցումն իրականացնում են մրցութային կարգով, որին կարող է մասնակցել նաև այդ ոլորտում ծառայություն մատուցող համայնքային առևտրային կազմակերպությունը: Համայնքի սեփականություն հանդիսացող առևտրային կազմակերպության կողմից մրցույթը շահելու դեպքում ծառայությունների իրականացման համար վճարները գանձում է տվյալ կազմակերպությունը և դրանք ուղղում համայնքի բյուջեի բաղկացուցիչ մաս կազմող արտաբյուջետային միջոցների հաշվին: Եթե մրցույթի հաղթող է ճանաչվում համայնքի սեփականություն չհանդիսացող կամ մասնակցություն չունեցող այլ կազմակերպություն, ապա հաղթող կազմակերպության հետ համայնքը կնքում է պայմանագիր, որում, մրցույթի արդյունքներից ելնելով, ամրագրվում են ծառայության իրականացման պայմանները, դրանց դիմաց գանձվող վճարները, որոնք գանձում է տվյալ կազմակերպությունը (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի) և դրանք ուղղում համայնքի բյուջեի բաղկացուցիչ մաս կազմող արտաբյուջետային միջոցների հաշվին:⁴

Երբեմն գանձվող վճարները չեն բավարարում ծառայության մատուցման պատշաճ որակ ապահովելու համար, այդ դեպքում համայնքի բյուջեից կարող է լրացուցիչ ֆինանսավորում (սուբսիդավորում) կատարվել: Այս կամ այն ֆինանսավորման եղանակը որոշվում է տվյալ ծառայության առանձնահատկություններով:

Պետք է նշել, որ հանրային ծառայության առաջին ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ չկա մրցակցություն սպառման մեջ, այսինքն՝ մեկ մարդու սպառումը չի սահմանափակում մյուսների սպառումը, այն ոչ մրցակցային է, օրինակ՝ փողոցների լուսավորությունը, երթևեկության կարգավորումը, ճանապարհների սպասարկումը, և այլն: Մինչդեռ մասնավոր ծառայության դեպքում, եթե որևէ մեկը սպառում է մասնավոր իրը կամ ծառայությունը, մյուսներին այն այլևս հասանելի չէ:

Հանրային ծառայության մյուս հատկանիշն այն է, որ որոշ ծառայություններ թույլ են տալիս սպառողին զրկել ծառայության մատուցումից կամ դադարեցնել սպառումը (օրինակ՝ անջատել լույսը կամ գազը՝ չվճարելու դեպքում), իսկ որոշ ծառայությունների դեպքում դա համարյա անհնար է (կամ էլ կապված է մեծ ծախսերի, մարդկային

⁴ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 88

ռեսուրսների ներգրավման կամ տեխնիկական միջոցների կիրառման հետ), օրինակ՝ փողոցներով երթևեկելը, աղբահանությունը, հասարակական կարգի պահպանությունը և այլն:

Հանրային ծառայության մատուցման դիմաց վճար կիրառելու լավագույն տարբերակն այն է, երբ տվյալ ծառայությունը ոչ մրցակցային է և զրկելի է⁵: Օրինակ, աղբահանության ծառայությունը մասամբ է համապատասխանում այդ չափանիշներին, քանի որ շատ բարդ է զրկել մատուցած ծառայության դիմաց չվճարող անբարեխիղճ բնակիչներին կամ կազմակերպություններին, քանի որ դա կապված է ծառայությունից օգտվելու վերահսկողություն իրականացնելու մեծ ծախսերի կատարման, տեխնիկական միջոցների կիրառման հետ:

ՏԻՄ-երը Հայաստանում հանրային ծառայություններն իրականացնում են կամ անմիջականորեն, կամ իրենց իսկ կողմից ստեղծված ընկերությունների միջոցով, կամ էլ ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթում հաղթող մասնագիտացված կազմակերպության կողմից: Այդ նպատակով համայնքը կարող է ստեղծել բյուջետային/կամ ոչ առևտրային և/կամ առևտրային կազմակերպություններ:

Առևտրային կազմակերպությունների առաջին խմբում ներառված են այնպիսի կազմակերպություններ, որոնց հիմնադիրը համայնքն է: Դրանք կարող են լինել փակ բաժնետիրական ընկերությունների (ՓԲԸ) և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (ՍՊԸ) տեսքով, որոնցում համայնքային բաժնեմասը կազմում է 100%:

Առևտրային մեկ այլ կազմակերպության տիպ է այն համայնքային կազմակերպությունները, որոնց բաժնեմասերի 50%-ից ավելին պատկանում է համայնքին:⁶ Դրանք հիմնականում բաց բաժնետիրական ընկերություններ (ԲԲԸ) են:

Առևտրային կազմակերպությունների մնացած ձևերը մասնավոր են: Հիմնականում այդ կազմակերպությունները ներկայանում են որպես ՍՊԸ-ներ, որոնց բաժնեմասը 100%-ով պատկանում է մասնավորին:

Առևտրային մեկ այլ կազմակերպության տիպ է այն մասնավոր կազմակերպությունները, որոնց բաժնեմասերի մինչև 50%-ն է պատկանում է համայնքին, մնացածը՝ մասնավորին:⁷ Դրանք ևս հիմնականում բաց բաժնետիրական ընկերություններ (ԲԲԸ) են:

Համայնքներում ոչ առևտրային կազմակերպությունների տեսակներից գործում են համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները (ՀՈԱԿ-ները): Որոշ դեպքերում հանրային ծառայություններ են մատուցում նաև բյուջետային կազմակերպությունները և համատիրությունները: Ըստ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի՝ բյուջետային հիմնարկները բյուջեներից

⁵ «Համայնքի ֆինանսական կառավարում» ուսումնամեթոդական ձեռնարկ, Վ. Շահբազյանի խմբ., Գորիսի երիտասարդական միություն ՀԿ, Երևան, 2009թ.

⁶ «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 2, կետ 2

⁷ Նույնը

Ֆինանսավորվող պետական և համայնքային հիմնարկներ են, իսկ համատիրությունը քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված և իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով ստեղծված շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կոոպերատիվ է, որը հիմնադրվում է բազմաբնակարան շենքի կամ շենքերի (այսուհետ՝ շենք) բաժնային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման նպատակով:⁸

Միաժամանակ, ՀՈԱԿ-ները և բյուջետային կազմակերպությունները նույնպես համարվում են հանրային կազմակերպություններ, միայն այն տարբերությամբ, որ սրանք շահույթ չհետապնդող են, իսկ առևտրային կազմակերպությունները շահույթ են հետապնդում:

Հանրային և մասնավոր կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների մեջ որոշ տարբերություններ կան: Այսպես, եթե մասնավոր կազմակերպությունները պետք է շահույթ հետապնդեն և այդ շահույթի հետ կարող են վարվել այնպես, ինչպես իրենց է հարմար, ապա հանրային առևտրային կազմակերպության շահույթը ներդրվում է ծառայության բարելավման, ընդլայնման, նոր տեխնիկայի գնման և այլնի համար⁹:

Համայնքային ծառայության վճար և որակ

Ինչպես վերը նշվեց, հանրային ծառայությունները կարող են լինել վճարովի և անվճար: Խորհրդային տարիներին ծառայությունները մատուցվում էին կենտրոնացված կարգով, բնակիչները չէին էլ մտածում ծառայության վճարների մասին: Ծառայության համար կատարվող վճարները միասնական էին ամբողջ երկրի համար և բացարձակ չէին արտահայտում ծառայության մատուցման իրական արժեքը: Ծառայությունների գինը «իջեցվում էր» վերևից, կենտրոնացված կարգով ամբողջ երկրի համար միևնույն սակագնով¹⁰:

Վճարը ՏԻՄ-երի կողմից միանվագ կամ մշտական մատուցվող ծառայության համար միանվագ կամ պարբերաբար գանձվող տեղական գանձույթ է:¹¹ Վճարն ուղղվում է տվյալ ծառայության մատուցման ծախսերը մասամբ կամ ամբողջությամբ ծածկելուն, իսկ վճարի չափը (դրույքաչափը) կարող է որոշվել՝ ելնելով սպառման ծավալներից կամ այլ հանգամանքներից:

⁸ «Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 3

⁹ «Համայնքի ֆինանսական կառավարում» ուսումնամեթոդական ձեռնարկ, Վ. Շահբազյանի խմբ., Գորիսի երիտասարդական միություն ՀԿ, Երևան, 2009թ.

¹⁰ Նույն տեղում:

¹¹ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, հոդված 3

Անհրաժեշտ է տարբերակել ծառայության վճար և ծառայության գին հասկացությունները: **Ծառայության վճարը** վարչական սահմանում է և վերաբերում է հանրային ծառայությանը, մինչդեռ ծառայության գինը որոշում է շուկան: Ծառայության վճարի չափը՝ սպառումից կախված, կարող է փոփոխվել:

Տեղական վճարը՝ ՏԻՄ-երի սեփական լիազորությունների շրջանակներում համայնքի կամ համայնքի պատվերով մատուցած ծառայությունների համար համայնքի բյուջե կամ բյուջեի բաղկացուցիչ մաս կազմող, օրենքի համաձայն բացված արտաբյուջետային միջոցների հաշվին վճարվող, համայնքի ավագանու սահմանած պարտադիր գանձույթ է:¹²

Համայնքի ավագանու նիստում՝ քննարկման արդյունքում, որոշվում է համայնքային ծառայությունների մատուցման առաջնահերթությունները, ընթացիկ և կապիտալ ծախսերի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների աղբյուրները, որոնք կարող են լինել ինչպես բյուջետային, այնպես էլ արտաբյուջետային: Համայնքային որոշ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ծախսերի հանրագումարից ելնելով՝ սահմանվում են ծառայությունների մատուցման վճարների չափերը, որոնք համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին: Այդ վճարները կարող են լինել ծառայությունների մատուցումն ինքնաձախսաձածկող կամ մասնակի ձախսաձածկող: Հատկացումներ կարող են նախատեսվել ինչպես համայնքի բյուջեում (սուբսիդիաների և դրամաշնորհների տեսքով), այնպես էլ ՀՀ պետական բյուջեում (ինչպես օրինակ, ոռոգման ջրի մատակարարման համար): Ի վերջո, համայնքային ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափերը և դրանց ձախսման ուղղությունները պլանավորվում են համայնքի գալիք տարվա բյուջեում, որը, համապատասխան աշխատանքային և հանրային քննարկումներից հետո, համայնքի ղեկավարի ներկայացմամբ քննարկում և հաստատում է համայնքի ավագանին:

Համայնքային ծառայությունները, ըստ այդ ծառայությունների մատուցման համար ստացվող վճարների, ունեն հետևյալ դասակարգումը՝

- ✓ համայնքի կողմից մատուցվող վճարովի ծառայություններ, որոնց սահմանված վճարները պետք է ապահովեն ծառայությունների ինքնաձախսաձածկում (օրինակ, խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում, ոռոգման ջրի մատակարարում, աղբահանություն և այլն),
- ✓ համայնքի կողմից մատուցվող մասնակի վճարովի ծառայություններ (օրինակ, նախադպրոցական կրթություն և արտադպրոցական դաստիարակություն, մշակույթ, սպորտ և այլն),
- ✓ ամբողջությամբ համայնքի բյուջեի հաշվին մատուցվող ծառայություններ (օրինակ, սանիտարական մաքրում, կանաչապատում, բարեկարգում,

¹² «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, հոդված 3

ներհամայնքային ճանապարհների ու փողոցների, համայնքի սեփականություն համարվող այլ ենթակառուցվածքների պահպանում և շահագործում),

- ✓ պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորություններով սահմանված հանրային ծառայություններ¹³, որոնց ֆինանսավորումը կատարվում է ՀՀ պետական բյուջեի հաշվին:¹⁴

Տեղական վճարների տեսակները և դրանց դրույքաչափերը սահմանվում են «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով (դրանց ամբողջական ցանկը բերված է Հավելված 1-ում):

Երբեմն կարծիք է հայտնվում, որ ծառայության դիմաց վճար գանձել պետք չէ: Որոշ համայնքապետեր հպարտանում են, որ ծառայության դիմաց վճար չեն գանձում, իսկ ծախսերը հոգում են համայնքի բյուջեից: Քաղաքական տեսակետից սա գուցե հասկանալի է, քանի որ բնակիչը կամ սպառողը առաջին հերթին ընտրող է, և ընտրովի մարմինը «խնայում է» բնակիչների ընտանեկան միջոցները: Բայց այս «լավության» հետևանքով տուժում են մատուցվող ծառայության և՛ որակը, և՛ ֆինանսական, և՛ տնտեսական կողմերը: Բանն այն է, որ նույնիսկ եթե ծառայության համար վճար չի գանձվում և այն ամբողջությամբ ֆինանսավորվում է բյուջեից, դրա ծախսերը միևնույն է վճարում են հարկատուները: Սակայն, այս պարագայում ձևավորվում է «ծրի ծառայություն» ստանալու հոգեբանությունը¹⁵: Նմանապես, խորհրդային տարիներին հանրային ծառայությունների համար ցածր վճարներ էին սահմանվում, ծառայության իրական ծախսերը սուբսիդավորվում էին կենտրոնացված ձևով՝ շահույթի կենտրոնացված բաշխման միջոցով: Այսինքն՝ այդ ծառայությունները շարունակում էին մնալ վճարովի, բայց վճարը կատարվում էր ընդհանուր կաթսայից կենտրոնացված ձևով՝ բնակչության համար մնալով թվացյալ չափազանց մատչելի, ինչը բերում էր պահանջարկի անսահմանափակ աճի, որն ավելի ու ավելի դժվար էր լինում բավարարել: Հիշենք, թե ինչպես էինք նախկինում սառեցնում ձմերուկն ու զարեջուրն ամռանը, երբ դրանք ժամերով և օրերով դրվում էին ծորակից հոսող սառը ջրի տակ: Այս մեթոդը այժմ դժվար թե մշտապես կիրառվի բնակչության կողմից, քանի որ ջրամատակարարումը փող արժե: Այսինքն՝ վճարի կիրառման պրակտիկան առաջին հերթին բերում է ռեսուրսների խնայողությանը հասարակության համար: Դրանով իսկ կանխվում է

¹³ Օրինակ՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեությունը համայնքներում, սոցիալական աջակցության (ծառայությունների) տրամադրումը և ՏԻՄ-երի կողմից սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների գործունեության կազմակերպումը:

¹⁴ «Համայնքի ծախսային քաղաքականության մեթոդաբանություն», Երևան 2013թ.
<http://www.mtad.am/files/docs/498.pdf>

¹⁵ Բացի այդ, այն հարկատուները, որոնք տվյալ ծառայությունից չեն օգտվում, այս պարագայում ֆինանսավորում են այդ ծառայության մատուցումը նրանց, ովքեր ակտիվորեն օգտվում են դրանից: Օրինակ՝ նախադպրոցական կրթության ծառայությունից համայնքի ոչ բոլոր բնակիչներն են օգտվում՝ ելնելով իրենց տարիքից կամ ընտանեկան վիճակից, սակայն այն մասնակիորեն ֆինանսավորվում է համայնքի բյուջեից:

պահանջարկի արհեստական անսահմանափակ աճը: Այդպիսով հանրային ծառայությունների վճարի կիրառումը նպաստում է ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը կամ խնայողությանը:¹⁶

Այսպիսով, հանրային ծառայությունների վճարների կիրառման հիմնավորումն այն է, որ այն ոչ թե պետք է ստեղծի շահույթ, այլ նպաստի ծառայության մատուցման տնտեսական արդյունավետությանն ու ինքնաձախսաձածկմանը:

Ծառայության վճարը մի չափանիշ է նաև, որով ստեղծվում է հետադարձ կապ ծառայության մատուցման որակի հետ: Այսինքն՝ ծառայության վճարների հավաքագրման աստիճանը անուղղակիորեն ցույց է տալիս մատուցվող ծառայության որակը:

ՏԻՄ-երի կողմից մատուցվող հանրային ծառայությունների առանձնահատկությունները

Ստորև ներկայացվում են ՏԻՄ-երի կողմից մատուցվող հանրային հիմնական ծառայությունների առանձնահատկությունները՝ ֆինանսական միջոցների ապահովման տեսանկյունից:

Համայնքի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունը Հայաստանում մատուցվում է երկու եղանակով՝

1) կենտրոնացված ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունը մատուցվում է մրցույթով ընտրված օպերատորի կողմից¹⁷: Այս դեպքում ծառայության մատուցման ծախսերը ներառված են անկախ մարմնի՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված՝ 1 խմ ջրի վճարի (սակագնի)¹⁸ մեջ: Բացի այդ, համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերում

¹⁶ «Համայնքի ֆինանսական կառավարում» ուսումնամեթոդական ձեռնարկ, Վ. Շահբազյանի խմբ., Գորիսի երիտասարդական միություն ՀԿ, Երևան, 2009թ.

¹⁷ 2016թ. նոյեմբերի 21-ին կնքված ֆրանսիական «Վեոլիա Գրուպ» - «Վեոլիա Ջուր ՓԲԸ» - «ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (ԷԵԲՊՆ-ի) Ջրային տնտեսության պետական կոմիտե» եռակողմ վարձակալության պայմանագրով՝ «Վեոլիա Ջուր»-ը 2017թ. հունվարի 1-ից 15-ամյա ժամկետով ստանձնեց Հայաստանում միասնական օպերատորի պարտականությունները:

¹⁸ 2017թ. հունվարի 1-ից «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից բաժանորդներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման համար գործում են հետևյալ սակագները.

- ✓ խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման սակագինը՝ 153 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ-ն),
- ✓ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցման սակագինը՝ 27 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ-ն):

կապիտալ ծախսեր կատարելու համար ՀՀ պետական բյուջեում նախատեսվում և կատարվում են լրացուցիչ միջոցներ:

2) ՏԻՄ-երն ինքնուրույն են մատուցում համայնքի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունը: Այս դեպքում ծառայության մատուցման ծախսերը պետք է մտնեն 1 խմ ջրի հաշվարկային սակագնի մեջ:

Համայնքի ավագանին, հիմք ընդունելով ծառայության մատուցման հաշվարկային ծախսերը, քննարկում և սահմանում է համայնքի տարածքում ծառայության մատուցման վճարի չափը 1 խմ ջրի համար, որը կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն ծածկել ծառայության մատուցման ծախսերը: Երկրորդ դեպքում ծառայության մատուցման ծախսերը լրավճարվում են (սուբսիդավորվում են) համայնքի բյուջեից: Համայնքի ղեկավարը՝ հիմնվելով համայնքի ավագանու սահմանած խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայության մատուցման վճարի չափի վրա, պետք է կազմակերպի և ապահովի դրա գանձումը ծառայությունից օգտվող ֆիզիկական և իրավաբանական անձանցից, իսկ սուբսիդավորվող ծառայության մատուցման դեպքում՝ համայնքի բյուջեից նաև կատարի համապատասխան ընթացիկ և/կամ կապիտալ ծախսեր:

Համայնքի ոռոգման ջրի մատակարարման ծառայությունը Հայաստանում ևս մատուցվում է երկու եղանակով՝

1) ոռոգման ջրի մատակարարումն իրականացնում են իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ջրօգտագործողների ընկերությունները (ԶՕԸ-երը): Այս դեպքում համակարգի շահագործման բոլոր ծախսերը ներառվում են ոռոգման 1 խմ ջրի սակագնի մեջ, ներառյալ ռեսուրսավճարը: Ոռոգման ջրի սակագինը հաստատում է ԶՕԸ-ան ընդհանուր ժողովը: Զրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների միությունների գործունեությունը կարգավորվում է 2002թ. ընդունված «Զրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ ջրային օրենսգրքով, իրավական այլ ակտերով, ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների կանոնադրություններով:

2) ՏԻՄ-երն ինքնուրույն են մատուցում համայնքի ոռոգման ջրի մատակարարման ծառայությունը: Այս դեպքում գործում է ոռոգման ջրի սակագնի հաշվարկման և սահմանման նույն մեխանիզմը, ինչ կիրառվում է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայության մատուցման 2-րդ տարբերակի դեպքում:

Համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի սպասարկման և շահագործման ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները գոյանում են բնակելի շենքերի բնակարանների և ոչ բնակելի այլ տարածքների սեփականատերերի պարտադիր վճարներից (որը հաստատում է կամ բնակելի շենքերի կառավարման մարմինը՝ համատիրության կամ կառավարման այլ ձև ընտրած մարմնի ընդհանուր ժողովը, կամ համայնքի ավագանին, եթե բնակելի շենքում որևէ կառավարման մարմին չի ձևավորվել), անդամավճարներից, վարձավճարներից,

կամավոր ներդրումներից և այլ միջոցներից, այդ թվում համայնքի բյուջեի միջոցներից՝ որի իրականացման կարգը և ֆինանսավորման չափը սահմանում է համայնքի ավագանին: Ծառայության մատուցման համար ՀՀ պետական բյուջեից ևս կարող են կատարվել նպատակային հատկացումներ՝ ընթացիկ կամ կապիտալ սուբվենցիայի տեսքով:

Համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը կարգավորվում է 2011-ին ընդունված «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքով:

Աղբահանության ծառայությունն ինքնաձախսաձածկվող է, աղբահանության վճարի չափը սահմանում է համայնքի ավագանին՝ օրենքով սահմանված նվազագույն և առավելագույն չափերի սահմաններում (հավելված 1):

Համայնքի տարածքի սանիտարական մաքրման ծառայության մատուցումն ամբողջովին դոտացիոն է: Ծառայության մատուցման ծախսերը հաշվարկվում են՝ ելնելով համայնքի տարածքի սանիտարական մաքրման սխեմայից, որը հաստատում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ:

Համայնքի բյուջեում, բացի այս ծառայությունների մատուցման ընթացիկ ծախսերից, կարող են նախատեսվել և կատարվել նաև կապիտալ ծախսեր՝ աղբահանության և սանիտարական մաքրման համակարգերում ներդրումներ կատարելու նպատակով:

Համայնքի կանաչ տարածքների խնամքի, կանաչապատման, ներհամայնքային փողոցների և ճանապարհների, այլ տարածքների պահպանման, շահագործման, նորոգման, բարեկարգման, արտաքին լուսավորության ծառայությունների մատուցումն իրականացվում է հիմնականում համայնքի բյուջեի միջոցներով՝ ՏԻՄ-երի կողմից հաստատված ծախսերի նախահաշիվներին համապատասխան:

Ներհամայնքային հասարակական տրանսպորտի ծառայության մատուցումը համաֆինանսավորվում է ծառայության մատուցման վճարներից և տվյալ համայնքի բյուջեի միջոցներից, և իրականացվում է մրցույթներով ընտրված ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների կողմից: Համայնքի ավագանին սահմանում է ներհամայնքային հասարակական տրանսպորտից օգտվելու սակագինը, երթուղիները և կանգառների տեղերը: Համայնքի բյուջեում պլանավորվում և կատարվում են կանգառների կառուցապատման, պահպանման, շահագործման և նորոգման աշխատանքների գծով համապատասխան ընթացիկ և կապիտալ ծախսեր:

Համայնքի սեփականություն համարվող կրթական (նախադպրոցական, դպրոցական, արտադպրոցական), մշակութային, մարզական, առողջապահական, սոցիալական նշանակության ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման և ջեռուցման, այդ ոլորտներում համայնքի բնակչությանը ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ընթացիկ և կապիտալ ծախսերը պլանավորվում և կատարվում են հիմնականում համայնքի բյուջեի միջոցներով, ինչպես

նաև ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբսիդիաներով, սուբվենցիաներով և օրենքով չարգելված այլ միջոցներով (նվիրատվություններ, օգնություններ, դրամաշնորհներ և այլն):

Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառներում համայնքային ծառայությունների ցանկը ներառում է նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության իրականացումը համայնքի տարածքում, համայնքային ենթակայության դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, մարզադպրոցների, երիտասարդական կենտրոնների, գրադարանների, կրթական, մշակութային, մարզական և երիտասարդական այլ հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը, դրանց պահպանման, շահագործման և նորոգման աշխատանքները: Նշված ծառայությունների մատուցումը սովորաբար համակարգում են համայնքների աշխատակազմերի կրթության, մշակույթի և սպորտի բաժինները կամ մասնագետները:

Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության ոլորտներում համայնքային ծառայությունների մատուցման դիմաց գանձվող վճարները, որպես տեղական վճարի տեսակներ, սահմանված են «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով, իսկ դրանց դրույքաչափերը հաստատվում են համայնքի ավագանու կողմից՝ տվյալ ծառայության մատուցման փոխհատուցման գումարի չափով (հավելված 1):

Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառներում համայնքային այլ ծառայությունների մատուցման դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը ևս հաստատվում են համայնքի ավագանու կողմից: Այս ծառայությունների մատուցումը համաֆինանսավորվում են նաև համայնքի բյուջեից, քանի որ դրանց համար գանձվող վճարները սովորաբար չեն բավարարում ծառայություններն ամբողջ ծավալով մատուցելու համար:

Գրադարանների ստեղծման, գործունեության կազմակերպման և ֆինանսավորման հարաբերությունները կարգավորվում են «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքով:

Ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի՝ **համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը** համայնքի պարտադիր խնդիրներից է (սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծվում են համայնքի ավագանու սահմանած չափորոշիչներով):

Համայնքի ղեկավարը սույն բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունը՝ համայնքի տարածքում կազմակերպում է սոցիալական աջակցության (ծառայությունների) տրամադրումը և ՏԻՄ-երի՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների գործունեությունը: «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված տարածքային մարմիններից են նաև ՀՀ մարզպետարանների, ինչպես նաև Երևանի

քաղաքապետարանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Զերմուկի համայնքների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանումները՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունները և սոցիալական աջակցության տարածքային բաժինները:

Համաձայն «Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքի, **հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառում** համայնքի ղեկավարի իրավասություններից են՝ համայնքային գերեզմանատներ և դիակիզարաններ կազմավորելը, շահագործելը և պահպանելը՝ քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերի պահանջներին համապատասխան:

Գրականություն

1. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 2016թ. դեկտեմբերի 16-ի փոփոխ.-ով
2. «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, 2016թ. դեկտեմբերի 16-ի փոփոխ.-ով
3. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք
4. «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենք
5. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք
6. «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենք
7. «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք
8. «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» ՀՀ օրենք
9. «Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենք
10. «Համայնքի ծախսային քաղաքականության մեթոդաբանություն», Երևան, 2013թ. <http://www.mtad.am/files/docs/498.pdf>
11. «Համայնքի ֆինանսական կառավարում» ուսումնամեթոդական ձեռնարկ, Վ. Շահբազյանի խմբ., Գորիսի երիտասարդական միություն ՀԿ, Երևան, 2009թ.

Տեղական վճարների տեսակները և դրույքաչափերը՝ սահմանված «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով

Հ/հ	Տեղական վճարների տեսակները	Տեղական վճարների դրույքաչափերը
1.	Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար.	համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար
2.	Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար.	համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար
3.	Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար.	համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար
4.	Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար.	համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար
5.	Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար.	համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար
6.	Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար.	համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար
7.	Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար.	1) կենցաղային աղբի համար՝ ա) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ առավելագույնը ամսական 400 դրամ,
8.	Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար.	բ) ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ առավելագույնը 25 դրամ. 2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

		ա) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ առավելագույնը 3000 դրամ, կամ բ) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ առավելագույնը 10000 դրամ: ¹⁹
9.	Կենտրոնացված ջեռուցման համար.	փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի
10.	Ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող կազմակերպությունների սպասարկման տարածքներում.	փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի
11.	Ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում.	փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.
12.	Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար.	համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար
13.	Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար.	համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար
14.	Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար.	համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար
15.	Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար.	համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար
16.	Համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և	համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար

¹⁹ Համաձայն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենք, հոդված 14

	համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար.	
17.	Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար.	1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ մինչև 300 դրամ ներառյալ. 2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ մինչև 2500 դրամ ներառյալ. 3) մեկ շաբաթվա համար՝ մինչև 5000 դրամ ներառյալ. 4) մեկ ամսվա համար՝ մինչև 25000 դրամ ներառյալ. 5) մեկ տարվա համար՝ մինչև 100000 դրամ ներառյալ ²⁰
18.	Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար.	մեկ փաստաթղթի համար՝ մինչև 1000 դրամ փոխհատուցման վճար.
19.	Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայություններից օգտվելու համար:	համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար

²⁰ Համաձայն «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» ՀՀ օրենք, հոդված 10-ի